ԱՆՀԱՏԻ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱ-ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅՈՒՄ ՌԵՆՏԳԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՏԱՄՆԵՐԻ ԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Բիշարյան Մ.Ս.[1], Ռոմոդանովսկի Պ.Օ.[2], Բարինով Ե.Խ.[2], Մանին Ա.Ի.[2], Սաիդով Մ.Տ.[2]

[1] Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի դատական բժշկության ամբիոն, Երևան, Հայաստան

[2] Մոսկվայի պետական բժշկական ստոմատոլոգիական համալսարան, Մոսկվա, Ռուսաստան

Հոդվածում քննարկված է դատա-բժշկական պրակտիկայում ատամների անատոմիական հատկանիշների օգտագործումը անհատի նույնացման նպատակի համար: Չճանաչված դիակների և նրանց մասերի, ինչպես նաև ոսկրային ֆրագմենտների անհատի նույնացումը, վերջին տարիներին, դատա-բժշկական պրակտիկայում զբաղեցնում է առաջատար տեղ ինչպես մեզ մոտ, այնպես էլ ողջ աշխարհում: Դա ամենից առաջ պայմանավորված է մի շարք երկրներում (Իրաք, Աֆղանստան և այլն) ոչ կայուն քաղաքական իրավիճակներով, բնական ծանր արհավիրքներով, լայնամաշտաբ աղետներով, տեղային ռազմական կոնֆլիկտներով և տեռորիստական ակտերով: Ատամների նշանակությունը՝ որպես դատա-բժշկական փորձաքննության ուսումնասիրության առարկա, պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր մարդու ատամներ գործնականում ունեն անորոշ քանակի անկրկնելիություն՝ համակցված նշաններով, անհատականությամբ: Այդ պատճառով, անհատի ատամների դատա-բժշկական նույնացման դեպքում ատամային շարքը դիտվում է ոչ միայն որպես ուսումնասիրության առարկա՝ լրացնելով այլ տվյալների տարիքային զուգակցումը, կրողի սեռական և ռասային պատկանելիությունը, այլև որպես նշանների կրող, մարդու անհատականության ոչ հաճախակի ապահոված հնարավորությանը նույնացում:

Այդ ասպեկտում նույնացման նշանները կարելի է ստորաբաժանել՝

1)ատամների անատոմիական նշանների,

2)ատամների, ատամային աղեղի և նստվածքի անոմալիաների,

3)ձեռքբերովի նշանների:

Տրված են ատամների օդոնտոսկոպիայի սխեման, ատամների մորֆոլոգիական չափման մեթոդները:

Ախտորոշիչ հիվանդության և ատամնածնոտային անոմալ համակարգում տրված է ռենտգենոլոգիական հետազոտության օգտագործման մասին տեղեկություն՝ որպես առաջատար մեթոդներից մեկը, որի դեպքում ստացված տվյալները կարելի է օգտագործել անհատի նույնացման համար:

Այսպես. Էնդոտոնտիայում արդյունավետ ախտորոշման և որակյալ բուժման համար պահանջվում է մինիմալ երեքանգամյա ռենտգենոլոգիական հետազոտություն:

Բժիշկ-ստոմատոլոգը պարտավոր է ընտրել այնպիսի մեթոդներ, որի օգտագործման դեպքում հնարավոր կլինի ստանալ առավելագույն ինֆորմացիա:

Բացի դրանից, արդյունավետ ախտորոշման և որակյալ բուժման դինամիկ ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է օգտագործել այն մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս հետազոտվող շրջանում ստանալ նույնացման պատկեր:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY